

ԱՊՐԻԼԵԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 94-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ
ՆՈՒԻՐՈՒԱԾ՝ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԵՐՁԱԿԵԱՆ

Կազմակերպութեամբ՝ Թորոնթոյի Միջ- Յարանուանական մարմնի, մասնակցութեամբ՝ Ս. Երրորդութիւն, Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցիներու, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական եկեղեցիներու 24 Ապրիլ 2009 Ուրբաթ, Երեկոյեան ժամը 8-ին, Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ մասնաւոր ոգեկոչման հանդիսութիւն 1915 Ապրիլին նահատակուած անմեղ 1.5 միլիոն զոհերու ի յիշատակ:

Երեկոյթին իրենց մասնակցութիւնը բերած էին քոյր եկեղեցիներու հոգեւոր հովիւներ՝ Հոգշ. Տ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան, Գերյ. Հայր Եղիա Ծ. Վրդ. Քիրէջեան, Արժ. Տ. Չարեհ Ա. Քհնյ. Չարգարեան, Վեր. Սամուէլ Ալպարեան, Վեր. Եսայի Սարմազեան, Հոգշ. Տ. Հայրիկ Աբոյ. Յովհաննիսեան, Արժ. Տ. Սարգիս Ա. Քհնյ. Կիւլեան եւ հիւրաբար քաղաքս գտնուող Վեր. Գրիգոր Աղապալտլու, ինչպէս նաեւ Միջ-Հարանուանական մարմնի Ատենապետ՝ Պր. Յակոբ Ճանպազեան, Թեմական Խորհուրդի Ատենապետ՝ Պր. Արա Պոյաճեան, կազմակերպութիւններու, եկեղեցիներու, միութիւններու, ներկայացուցիչներ, եւ եկեղեցին լեցնող հոծ բազմութիւն մը, որոնք եկած էին նահատակներու յիշատակին իրենց յարգանքի տուրքը մատուցելու:

Բացման խօսքով հանդէս եկաւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Չարեհ Ա. Քհնյ. Չարգարեան: Տէր Հայրը բարի գալուստ մաղթելէ ետք, աւուր պատշաճի յարգանքի եւ ոգեկոչման այս հանդիսութեան նուիրուած իր սրտի խօսքը փոխանցելէ ետք, յայտագիրը սկսաւ միաբերան երգուած Տէրունական Աղօթքով ու շարունակուեցաւ Սաղմոս-28-ի ընթերցումով:

Կարգով ընթերցումներ կատարեցին՝ Բրշ. Կարօ Սրկ. Սարգիսեան Մատթեոս 5. 1-12 « Երանութիւններ », Օրդ. Թիաննա Շահմուրատեան Նամակ Հռոմեայեցիներուն 8. 31-39 « Աստուծոյ Մէրը », Օրդ. Թամար Պետիրեան Ա. Թեսաղոնիկեցիներուն 4. 13-18 « Մեռելներու Յարութիւնը եւ Տիրոջ Գալուստը » եւ Լենա Կարապետեան Ա. Կորնթացիներ 51-58 « Յարուցեալ Մարմինը »:

Գեղարուեստական բաժնին մէջ Տիկ. Գայանէ Սահակեան- թաւջութակ եւ Տիկ. Իվէթա Մելքումեան- դաշնամուրով իրենց մասնակցութիւնը բերին Արմէն Տիգրանեանի « Անուշ » Էն կտորով մը, ինչպէս նաեւ անմահ Կոմիտասի « Կռունկ » եւ « Տլէ Եաման » կտորները գեղեկօրէն նուագելով արժանացան ներկաներու ջերմ գնահատանքին:

Տիկ. Գայանէ Մինասեան վճիտ առողջանութեամբ մեկնաբանեց, Պարոյր Սեւակի « Եռածայն Պատարագ » Էն հատուածներ:

Ս.Ե.Հ.Ա. Եկեղեցւոյ « Երազ Երգչախումբ » ը խմբավարութեամբ եւ դաշնամուրի ընկերակցութեամբ՝ Տիկ. Մելինէ Աֆեանի յաջողապէս մեկնաբանեցին Ռոպերթ Ամիրխանեանի « Հայու Աչքեր » եւ « Երազ իմ երկիր հայրենի » ինչպէս նաեւ Կոմիտասի « Ես լսեցի մի անուշ ձայն » կտորները:

Օրուայ հիւր բանախօսն էր Պոլսոյ Հայ Աւետարական Եկեղեցիներու Հովիւ՝ Վեր. Գրիգոր Աղապալօղլուն, որուն կենսագրական գիծերը հակիրճ ձեւով ներկայացուց երեցուհի՝ Թամար Ալպարեան:

Վերապատուելի Գրիգոր Աղապալօղլուն մօտ 40 վայրկեան տեւող իր հայերէն բանախօսութեան ընթացքին մեծ մասամբ անդրադարձաւ իր ծննդավայրը Արաբկիրի մէջ անցուցած մանկութեան օրերէն, որպէս հայ քրիստոնեայ գաւազ ունեցած դժուարութիւններուն մասին համառօտ տեղեկութիւններ փոխանցեց եւ իր կեանքէն յիշատակելի դրուագներ պատմեց: Վերապատուելին ըսաւ թէ՛ թուրք հաւաքականութեան մէջ ալ կան անձեր որոնք ընդունած են քրիստոնէութիւնը ու այսօր ամէն տեղ կը քարոզեն զայն: Հագիւ 9 տարիներ առաջ էր որ ինք հայերէն սորված էր եւ հակառակ ունեցած իր բոլոր դժուարութիւններուն ան մնացած էր հայ եւ քրիստոնեայ: Իր խօսքերուն մէջ մասնաւորաբար ծանրացաւ ու անդրադարձաւ արդարութեան, հաւատքի եւ Յիսուսի զօրութեան վրայ: Հրաւիրեց բոլորը Քրիստոսի հաւատքով զօրացած, հաստատ մնալ որպէս հայ եւ քրիստոնեայ:

Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Հոգ. Տ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան, այս առթիւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց՝ Թորոնթոյի Միջ-Յարանուանական մարմնին, այս երեկոյթին իրենց մասնակցութիւնը բերող բոլոր անդամ ու անդամուհիներուն, նուագողներուն, երգողներուն, ասմունքողին եւ մասնաւորաբար Վեր. Գրիգոր Աղապալօղլուին, մաղթեց որ Աստուած իրենց հետ ըլլայ եւ մանաւանդ Պոլսոյ եւ գաւարներու մէջ ապրող քոյր եւ եղբայրները կարենան ապրիլ, ինչպէս որ իրենց նախահայրերը ապրեցան քրիստոնէական հաւատքով եւ ազգային արժանապատուութեամբ:

Հայր Սուրբը իր խօսքերը Վեր. Աղապալօղլուին ուղղելով ըսաւ՝ « Մեզմէ ոչ մէկը այս գեղեցիկ երկիրները իրենց կամքով եկան: Մենք թէւ ազատ երկրի մը մէջ կ'ապրինք, բայց տակաւին սուրին ցաւը եւ տառապանքը կը զգանք, 94 տարի է ի վեր մեր զգացումները կը քերթուին, մեր արժանապատուութիւնը մեզմէ կ'առնուի, մենք տակաւին մեր գերեզմանին մէջն ենք, մենք կը հաւատանք որ մեր ոսկորները օր մը անպայման միս պիտի ունենան, ջիղ ու կեանք պիտի ունենան եւ այդ կեանքը մեզ յարութեան տեսիլքով պիտի բարձրացնէ Աստուծոյ քով: Մենք 94 տարի է քրիստոնէական հաւատքով պայքարեցանք, որպէսզի օր մը կարենանք մեր իրաւունքը պաշտպանել եւ ճաշակել այն հացէն եւ ջուրէն որ Տէրը մեզի համար պատրաստած է երկնքի արքայութեան մէջ: Տակաւին մեր պայքարը չէ վերջացած, մեր պայքարը միասին է եւ մենք կը հաւատանք որ ձեռք ձեռքի եւ սիրտ սրտի պիտի կարենանք ընել այնպէս մը որպէսզի կ'արենանք ապրիլ այն կեանքը որ մեր իրաւունքն է որ ապրինք: Աստուած օրինէ ձեր Աստուածատուր շնորհքը, ձեզի կը մաղթեմ ոյժ, կորով եւ կամք:»

Հայր Մեղրիկ իր խօսքերու աւարտին մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Չարեհ Ա. Քհնյ. Չարգարեանին, հոգաբարձութեան եւ տիկնանց յանձնախումբին: Ապա տեղի ունեցաւ մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօն, 1915-ին նահատակուած անմեղ զոհերու հոգիներուն ի հանգիստ:

Յաւարտ Հոգեհանգստեան Պաշտօնի դպրաց դասի առաջնորդութեամբ հոգեւորականաց դասի եւ ներկայ ժողովուրդի կողմէ կազմուած թափօրը վառուած մոմերով, Երազ Երգչախումբի կողմէ երգուած « Տէր Ողորմիա » երգեցողութեամբ առաջնորդուեցան դէպի յուշակոթող:

Յուշարձանի առջեւ ծաղկեպսակ զետեղել է ետք, միաբերան երգուեցան « Զրիստոս Որդի Աստուծոյ », Տերունական աղօթքը « Զայր Մեր », « Սարտարապատ » եւ Զայաստանի Զանրապետութեան օրհներգը « Մեր Զայրենիք »: Ներկաներու կողմէ Յուշարձանին մեխակներ դրուել է ետք, պաշտօնական արարողութիւնը իր աւարտին հասաւ:

Այնուհետեւ եկեղեցւոյ « Մակարոս Արթնեան » սրահին մէջ, Տիկնանց Միութեան կողմէ պատրաստուած ճոխ հիւրասիրութեամբ երեկոյթը վերջ գտաւ: Ներկաները ոգեկոչման այս հանդիսութենէն խորապէս տպաւորուած , գոհունակ եւ յագեցած ըլլալով բաժնուեցան եկեղեցիէն: